Շարունակում է 1900 թ. բաժանորդագրութիւնը

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz



Պարսկաստան.—Իսպահանի պատմական մզկիթ
(Պարսիկների նշանաւոր ուխտատեղի) Նկար Ա. Բուլի

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՍՐԵԳՆԱՓԱՅԼ ՁԱՀՆ-ՁԱՀ ՄՈՒԶԱՖՓԷՐ-ԷԴԴԻՆԻ ՁՆՈՐՀԱՒԵՐ ԳԱԼՈՒՍՏԸ

—

Վաղը, երկուշաբթի, մայիսի 15-ին Իրանի ինքնակալը, թագաւորաց ամենահին թագաւորը իր փայլուն շքախմբով մտնելու է Թիֆլիս եւ իջեւանելու պալատում:

Արեգնափայլ Հիւրին Նորին Մեծութիւն մեր Թագաւոր Կայսրը ո՞ր առաջ է ուղարկել իր պալատական թիկնապահներից բարձրաստիճան պաշտօնեաները: Սահմանից՝ Ջուլֆից սկսած ամեն տեղ, հրնայած փոթորկալից հեղեղներին՝ Արեգնափայլ Ձահրն-Ձահին այնպիսի մի սրտագին ընդունելութեամբ է ողջունում ժողովուրդը, որ յաւիտեան անմոռաց կը մնայ Թագաւոր Կայսրի Վեհափառ Հիւրի համար այդ ընդունելութիւնները, իբրեւ առհաւատչեայ այն հզօր բարեկամական սերտ շաղկապին, որ մեր Օգոստափառ Կայսրը տածում է դէպի իր տոհմանակից բարեկամ թագաւոր Մուզաֆֆէր-Էդդինը:

Արեգնափայլ Շահն-Շահի երկրորդ որդի Շահզադէ Մելիք-Մանուր-Միրզա

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տարազի յատուկ № ի պատիւ Արեգնափայլ Շահն-Շահի, լոյս կըտեսնի աշնան, երբ Վեհափառ Իրանի ինքնակալը իր ոսոշած ճանապարհորդութիւնը կատարած՝ վերադառնալիս կըլինի մեր երկրով իր աթոռանիստ Թէհրանը։ Այդ որոշումը մենք պարտաւոր էինք անել այն պատճառով, որովհետև Արեգնափայլ Շահը մեր երկրով միայն անցնում է այժմ և ոչ պաշտօնական է Նորին Վեհափառութեան այս այցելութիւնը։ Արեգնափայլ Շահը Վլադիկովկասից ուղղակի կանցնի Վոլոչինսկի վրայով Աւստրիայի Հանքային ջրերը և առողջութիւնը վերականգնելուց յետոյ, կըսկսի իր պաշտօնական այցելութիւնները Պետերբուրգից, ապա Կոպէնհագէն, Պարիզ և այլն, և այլն ու կըվերադառնայ Կովկասով իր երկիրը։

DISSONANSE

Նուէր Վ. Տ.-ին

Ես մի՛ ջանայ ինձ սփոփել
Ո՛վ, իմ ընկեր սիրելի.
Հառաչանքից այրուած սրտում
Կանաչ զարուն չի՛ բացի։

Ա՜խ, ես զուր եմ «սէր» ասում
Անգութ, անխիղճ կեանքի մէջ,
Ուր որ չըկան կարոտ ու լաց,
Ուր չարութիւնն է անվերջ։

Ինձ ասում են՝ կեանքը թոյն է,
Մարդն էլ անսիրտ ու անգութ,
Հոգին չունի՛ բաղձանք ու յոյս,
Սիրտն էլ սեւ է խո՜ր ու մո՜ւթ...

Բայց եւ երբէք ես չե՛մ ուզի,
Հեռու ապրել քո սրտէդ,
Հոգիդ յուսակ, սիրտդ մաքուր
Ինձ կապել են կեանքի հետ...

Պ. Մանուեանց

Երևան.—Հինաւուրց պարսկական ապարանք.

Հայուհիներ, — Թաս-պարսկական սահմանագլուխը Ղարաբաղի ափերում



Երեզնափայլ Շահն Շահի ամառնային պալիքիանը Թէհրանում.

Պարսկական մեդրեսէ

Պարսից Շահի հանապարհորդութիւնը

—

Մայիսի 7-ին երեկոյեան ռուսական Ջուլֆ է մտել Նորին Մեծութիւն Պարսից Շահը, որին դիմաւորել են հանդիսաւոր կերպով կառավարութիւնից նշանակուած անձինք և տեղական իշխանութիւնը։ Եղանակի վատութեան պատճառով Մուզաֆար Էդդին Շահը մի-երկու օր մնալով այնտեղ, բարեհաճեց մեկնել Հին-Նախիջևան, ուր հասաւ մայիսի 9-ին։ Ամբողջ ճանապարհին Ջուլֆից մինչև Նախիջևան ազգաբնակչութիւնը ամենաանկեղծ կերպով դիմաւորեց Իրանի Վեհապետին։

Մայիսի 10-ին Շահը իր շքախմբով հասել է Բաշնորաշէն, իսկ այդտեղից ուղևորուել է Երևան, ուր հասել է մայիսի 11-ին երեկոյեան։ Քաղաքը պատշաճաւոր կերպով զարդարուած է և երեկոյեան լուսավառութիւն է եղել։ Ընդունելութիւնը հանդիսաւոր է եղել թէ կառավարութեան և թէ ժողովրդի կողմից։

Որովհետև Բաղուի մասում Անդրկովկասեան երկաթուղու գիծը վնասուած է, ինչպէս և Սամուր գետի վրայի կամուրջը Դերբենտ-Բալաջարի մասում—Վլադիկաւկազեան երկաթուղու, Շահը Աղստաֆայից կուղևորուի Թիֆլիս, ուր երեք օր հանգստանալուց յետոյ, ռազմավիրական ճանապարհով կըշարունակէ իր ճանապարհորդութիւնը դէպի Վլադիկաւկազ, ապա այդտեղից դէպի Վոլոշինսկ։

ԴԷՊԻ ԵՒՐՈՊԱ

(Հրահանգ Պարիզի Ցուցահանդէս գնացողներին)

I

արբեր հարցերով օր չէ անցնում, որ մի քանի նամակ չըստանանք ցուցահանդէս գնալու մտադրուող անձինքներից։ Մէկը հարցնում է 1000 ռուբլիով կարող եմ և ցուցահանդէս և Ժընև գնալ։ Մի ուրիշը 3000 ռուբ. է որոշել երկու ամսով իր կնոջ հետ ցուցահանդէս գնալու և հարցնում է արդեօք այդ գումարը բաւական է, որ Պարիզում քաղցից չընեղուի և բացի այդ II կլասով լինի ճանապարհորդութիւնը։ Մի ուրիշը լսել է, որ ֆաշանացրած գնացքների վարչութիւնը, որ գտնուում է Ֆինանսների մինիստրի հսկողութեան տակ, առաջարկել է Տարազի խմբագրութեան, որ նրա բաժանորդներին տանէ ցուցահանդէս ընդհանուրի համար որոշուած 300 ր. էլ պակաս, և ահա պարոնը տեղեկութիւններ է ուզում և հարցնում է 200 ր. արդեօք չի՞ կարելի Նուխուց գնալ Պարիզ, ութ օր մնալ և էլի վերադառնալ։ Հարցնողները շատ-շատ են, բայց մեծամասնութիւնը, ինչպէս երևում է նրանց նամակներից, բիւջէի շուրջն է պտտում, առանց որոշ ծրագրի։

Ի՞նչու Պարիզ և ապա անպատճառ Ժընև և ոչ Լոնդոն, Դրէզդէն, Վենետիկ կամ Բերլին։ Անշուշտ սա իր շատ բնական պատճառնունի։

Ամեն ազգից շատ հայը ընդարձակ և լաւ գաղափար ունի Ազգայարիայի մասին և ահա նա չէ կամենում Պարիզ գնալ և Ժընևը զանց առնել։

Երկու ամսով երկու հոգի միայն Պարիզ գնալու համար 3000 ր. ատ-շատ է, նոյն իսկ առաջնակարգ ճեպընթացքներով գնալ-գալու և ամեն օր եօթը տեսակ կերակուր, շամպայն ուտել խմելու համար։ Ի՞նչու չէ 200 ր. էլ կարելի է գնալ ցուցահանդէս, մի 8—10 օր մնալ և վերադառնալու անշուշտ շատ օգտակար տեղեկութիւններ ստանալ, շատ նորութիւններ տեսնել և լսել։ Հարցը ուրեմն

դրամի քանակութեան մէջ չէ, այլ գիտակցաբար ծախսելուն։

Իմ կարծիքով ամենից առաջ ցուցահանդէս գնացողը պէտք է իր համար կազմի որոշ ծրագիր, թէ ինչու է գնում. արդեօք թամաշի, աշխարհատեսութեան, թէ գիտութեան և արուեստի մի որևէ ճիւղ նրան հետաքրքրում է, կամենում է տեսնել նրա կատարելագործուած վերջին կազմը, գիտութեան ստեղծագործութեան վերջին նմուշը։

Ինձ թւում է, որ ցուցահանդէս գնացողների ամենամեծագոյն մասը սոսկ բամաշա՝ գնում։ Այս դէպքում բիւջէն էլ ինչ նշանակութիւն ունի։ Երևակայեցէք, որ դուք գնում էք հասարակաց մի այգի, ենթադրենք հէնց Թիֆլիսի Մուշտայիդը։ Այստեղ բարեգործական բազար է։ Մուտքը 20 կ. տալիս էք՝ մտնում։ Նստում է մի երկու խումբ զինուորական երաժշտութիւն, մի կողմում զուռնա, մի ուրիշ տեղ զինուորական երգեցիկ խումբն է տաղեր ասում, անթիւ խառնիճաճանչ բազմութիւն, հրախաղ, փառաւոր լուսավառութիւն և այդ բոլորը 20 կոպ.։ Սակայն դուք մի բան էք կամենում ուտել. այստեղ արդէն գրպանի խնդիր է, կարող էք մօտենալ ինքներդ բուֆետին, մի պատառ հաց պանիր կամ ապուխտ միս առնել և հեռանալ մի ծառի տակ, դետնին նստել ուտել, բայց կարող էք և ծառային հրամայել որ ձեզ սեղան և աթոռ տայ, կերակուրների ցուցակը պահանջել և հրամայել,— այս դէպքումն էլ բիւջէն փոխւում է։ Նոյն բուֆէտից բերուած հէնց թէկուզ միևնոյն հացն ու ապխտացրած միսը ուրիշ գին ունին։ Ափսէների, սեղանի, աթոռի վճարը աւելացնում են պահանջած կերակրիդ վրայ և ծառային էլ մի բան պիտի բաշխէք։ Բայց սկի քաղցած չէք, և այս կողմից այն կողմը թափառելուց սաստիկ յոգնել էք և կամենում էք մի աթոռի վրայ նստել,—ահա պէտք է վճարել։ Այդիում հազար ու մի հետաքրքիր տնակներ, կիոսկներ, վրաններ կան, ուր բազմաթիւ ժողովուրդ մըտնում, դուրս է գալիս։ Դուք էլ էք կամենում իմանալ ինչ է կատարւում։ Սակայն ամեն տեղ մտնելու համար առանձին, թէև շատ չնչին վճարներ կան և ինչպէս չրմտնել։ Մտնում էք

Ararat.—Թուս-պարսկական սահման.

և ծախսում. ընդարձակ բազար, առաջարկում են գնել, աւելի անամօթ կպչելով ձեզ քան մեր Թիֆլիսի Թամամշևի քարւանսարայի շպապչիկները։

Այդին գնալու համար, եթէ դուք Մուշտայիդից հեռու էք ապրում. օրինակ Հալաբար կամ Սոլոլակ, ի հարկէ ոտով այդքան ճանապարհ չէք գնալու։ Անշուշտ կամ քարշակով, կամ փայտոնով պիտի գնաք, միևնոյն ճանապարհի համար գները շատ տարբեր է, կարելի է Թամամշևի քարւանսարայից և 5 կոպէկով գնալ քարշակով, կարելի է 40 կ. փայէտոնով։ Իսկ եթէ կամենաք բետին հագցրած անիւներով կառքի մէջ նստել, այդ դէպքումն էլ աւելի պիտի վճարէք։

Միևնոյն օրինակը պէտք է ի նըկատի ունենալ և Նուխուշ-Պարիզ գնալիս, եթէ քարշակ նստէք, տրեն-օմնիբուսով գնաք, հարիւր տեղ վագոնից վագոն կրփոխւէք, մի քանի ժամ օրական այս և այն կայարաններում գնացքների կըսպասէք ի հարկէ, 200 ր. էլ կըգնաք ցուցահանդէս և կըվերադառնաք. Բայց ուրիշ բան է ճեպընթաց գնացքները և սրանց մէջ էլ շատ մեծ տարբերութիւն կայ։

Եւրոպայում կարելի է միևնոյն տեղից, օրինակ Բագուից Թիֆլիս գալ I կլասով և վճարել աւելի քիչ, քան II կլասով։ Հանգստութիւնը գնացքի արագութեան, շքեղութեան, յարմարութեան մէջն է։ Եւրոպայում գնացքներ կան, այնպիսի յարմարութիւններով, որ շատ տներ իսկ չունին։

Ուրեմն ամենից առաջ Ցուցահանդէս գնացողը պէտք է կազմի իր համար որոշ ծրագիր. եթէ նա առաջին անգամն է Եւրոպա գնում, չըպէտք է բաւականանայ սոսկ Պարիզով և և նրա Ցուցահանդէսով. Այլ պէտք է տեսնէ և ուրիշ երկիրներ. Պարիզի անունն է մնացել։ Բերլինը, Լոնդոնը այնպիսի հսկայական քայլերով են առաջ գնացել, որ մնացել է Պարիզի նախկին հռչակը։ Եթէ Ցուցահանդէսը էլ հետաքրքիր է լինելու, այդ շնորհիւ (ինքներդ ձեր աչքով կըտեսնէք,) օտար երկրների արդիւնաբերութիւնների.

Կովկասից Եւրոպա գնացողին, եթէ նա չի եղել և մեր մայրաքաղաքներում, ու առաջին անգամն է իր քաղաքից դուրս գալիս, ես խուրհուրդ կըտայի հետևեալ ծրագրով իր ուղևորութիւնը կատարել.

Թիֆլիսից կամ Բագուից հանքային ջրեր (Խեսեցուկի, Ժելեզնովոդսկ, Կիսլաւոդսկ), Ռոստով, Ն. Նախիջեւան—ս. Խաչ վանք (Նալբանդեանցի, Գամառ Քաթիպայի դամբարանները) Խարկով (բեռ փոշուց աւելի ոչինչ չրկայ այստեղ) Մոսկուա, Պետերբուրգ, Բերլին, Ռոտերդամ, Ամստեր-

դամ, Հառիճով Լոնդոն, Պարիզ, Օստինդէ, Բրիւսէլ, Ժընև, Լոզան, Մոնտրո (լճի շուրջը), Մարսէյլ, Նիցցա, Մոնակո, Մանտոն, Քան, Ջէնովա, Միլան, Ֆլորանս, Վենետիկ, (ս. Ղազարու վանք) Թրիէստ և Զեմերինգով) Վիէննա Բուտապեշտ, Վարշաւ, Կիև, Բոստով, Բագու-Թիֆլիս։ Ես վերցրի բոլոր ճանապարհը ցամաքով, բացի Հառիճ և Օստինդէ։ Մայրաքաղաքներում մնալ 3—5 օր և պտտել շրջակայ կուրորտներն ու քաղաքները։ Օրինակ Բերլինից գնալ Դրեզդէն, Լայպցիգ, Պոտսդամ, Մարիենբադ, Կարլսբադ, Ֆրանցիսբադ։ Վիէննայից գնալ Միւնխէն, Վերիսհոֆէն։ Պետերբուրգից, Պետերհով, Պաւլովսկ, Ցարսկոե-Սէլօ, Դատչինօ և այլն։

Երկու ամսով այս երկրներում (Ռուսասան, Գերմանիա, Հոլանդիա, Անգլիա, Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա, Աւստրո Ունգարիա) պտտելով՝ երկու հոգուն ճեպընթաց գնացքներով Ս կլ. վայելուչ կենցաղ և բնակարան, ամեն երեկոյ թատրոն, նւագահանդէս, կամ երեկոյթ այցելելով առանց հագուստեղէն և այլ իրեղէններ գնելու, բաւական է 2000 ռուբլի։

Հարաւային Ֆրանսիա և Իտալիա էլ այցելելու համար պէտք է այնպէս ճանապարհուել, որ սեպտեմբերի սկզբներին լինել այնտեղ։ Աւելի յարմար է Կովկասից ճանապարհ ընկնել յուլիսի կիսին և վերադառնալ սեպտեմբերի կիսին։ Ամառը Պարիզումն էլ շոգ է, իսկ միւս քաղաքները դատարկ։

Այժմ պատրաստուենք անցագիր ձեռք բերելու։

ՐԱԴԱՄԷՍ

(Կըշարունակի)

Գեղարուեստ

Թատրոն, երաժշտութիւն

Արք. թատրոնում պ. Ստեփանովի դրամատիկ անաջող խմբի ներկայացումները ընթանում են տաղտկալի։ Սկսել են արդէն և բենեֆիսները օպերային գներով։

—Թիֆ. Սրտիստիկ. ընկ. այս սեզոնի վերջին ներկայացումը տաւ անցեալ չորեքշաբթի իր հին բնակարանում. սշունքից ընկեր. փոխուում է իր նորակառոյց հոյակապ շինութիւնը, որ պիտի ունենայ յարմար և ընդարձակ բեմ, դահլիճ և այլն։ Հրաժեշտի երեկոյին թատերասէրները ներկայացրին Տոլստոյի «Плоды Просвѣщ.» կոմեդիան։ Պ. Օպոչինին բեմից մի ճառ խօսեց, զեկուցանելով հին բնակարանից նորը անցնելու որոշումը։

—Տիկին Սաւինան մայիսի վերջերին Դոլինի խմբի հետ ժամանելու է Թիֆլիս և ազն. թատրոնում մի շարք ներկայացումներ է տալու։ Մինթէ հնարաւոր չէր լինել, որ Դոլինի խումբը միանար պ. Ստեփանովի խմբի հետ և ներկայացումները տուէր արք. թատրոնում։ Զէ՞ որ այնուհետև Ստեփանովի խումբը պիտի խաղայ դատարկ թատրոնի համար։

—Օրլիկի ղեկավարութեամբ մալորոսական խմբի ներկայացումներն էլ օրերս կըսկսուին ամառային թատրոնում։ Խումբը բազմամարդ է, հետը բերում է իր հագուստեղէնը, դեկորասիօնները և օրկեստրը։

Դպրոցական

Մտադրութիւն կայ Ռուսիայում բանալու առևտրական բարձրագոյն դպրոց, որ կըկրէ Առևտրական ինստիտուտ անունը։ Դրա ծրագիրը կազմուած է արդէն և քննելու է առևտրական գիտութիւններ տարածող ընկերութեան մէջ։ Դասընթացը քառամեայ է և դպրոցի նպատակը կըլինի պատրաստել առևտ. գիտութիւնների դասատուներ և օրինակելի վաճառականներ։

—«Тифл. Лист.»-ին հաղորդում են, որ Թիֆլիսում եկեղեցական ծխական դպրոցների վրայ հսկելու համար հաստատուում է վերակացուների երկրորդ պաշտօն։

Զանի ընդունելութիւնը Թիֆլիսում

Հենց որ պաշտօնապէս որոշուեց թէ Զանն-Զանը, Պետրովսկ-Դերբենդեան գծի փչանալու պատճառով, Ռազմավիրական ճանապարհով պիտի անցնէ, ուրեմն և բարեհաճէ Թիֆլիս մտնել, իսկոյն սկսուեցին պատրաստութիւններ Վեհափառ հիւրին ընդունելու։

Քաղաքագլուխը կարգադրեց անչափաղ կարգի բերելու այն փողոցները, որ պիտի անցնի Զանն-Զանը։ Քաղաքի երեք մասում՝ Վոկզալի, Բարեատինսկայա և Օլգինսկայա փողոցների վրայ շքեղ յաղթական կամարներ են կազմած։ Քաղաքը սկսեցին զարդարել ռուսական և պարսկական դրօշակներով, ծաղիկներով, կանաչով, գորգերով և զոյնզոյն կանթեղներով։

Պալատը պատրաստել են Արեգնափայլ հիւրի համար, իսկ Օրիանս և Կովկաս հիւրանոցները շքախմբի։ Բացի այդ՝ պարսից հիւպատոսարանում նոյնպէս իջևան են պատրաստուած պարսիկ մեծամեծների համար։

Ճանապ. հաղորդակցութիւն

Վերջին օրերս եղանակի յանկարծակի փոփոխութիւնը մեծ վնասներ է տուել ճանապարհներին, երկաթուղիական գծերին։ Ռազմավիրական ճանապարհից հեռագրում են, որ Լարս և Կագբէկ կայարանների մէջ քարեր են թափուել լեռներից և ճանապարհի կէսը փչացրել։ Դրանից պոստի և ճանապարհորդական կառքերի երթևեկութիւնը ժամանակաւորապէս դադարեցրած է։ Այդ պատճառով է, որ մայրաքաղաքից պոստը մայիսի 9, 10 և 11-ին չըստացուեցաւ Թիֆլիսում։ Միայն մայիսի 10-ից ժամի 2-ին ճանապարհ է բացուել թեթև կառքերի համար։

—Թիֆլիսից Ռուսիայի պոստը ըստանալը և ուղարկելը Անդր. երկ. գծի Բալաջարի կայարանի վրայով, այժմ հերթական հարց է դարձել։ Այդ մասին կարգադրութիւն է եղած և տեսնուած են պատրաստութիւններ, այնպէս որ մօտիկ ապագայում սպասուում են այդ ճանապարհով երթևեկութիւններ։

—Սաստիկ հեղեղներից վնասուած են ոչ միայն Ռազմա-վիրական ճանապարհը, այլ և ընդհատուած է Բագու-Բաթումեան երկաթուղիով երթևեկութիւնը։ Ալեթ, Սանդաչալ, Մալեթա կայարաններից հեռագրում են, որ բաւական տարածութեամբ ճանապարհները փչացած են, այնպէս որ դժուար է որոշել թէ երբ կարելի կըլինի հաղորդակցութիւնը վերականգնել։

Дозв. ценз. Тифлисъ, 12-го мая 1900 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип. К. Е. Мартиросіанца Орбел. № 1—2